ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2022Թ.-Ի 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահություն

Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար 2022 թվականի գլոբալ բյուջեով նախատեսվել է 760.0 մլն. դրամ:

Իրականացվել է 57750.9 հազ. դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածին եղել է 50727.3 հազ.դրամ՝ ավելացել է 7023.6 հազ. դրամով:

2022 թ.1-ին կիսամյակի ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել են 106 ծնունդ, 2021թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել են 131 ծնունդ՝ նվազել է 25-ով:

2022թ.-ի ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 45 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 20 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 6 երեխա իրենց խնամակալների հետ:

Բժշկական կազմակերպություններում աշխատում են 395 բուժաշխատող:

Առողջապահության Ազգային Ինստիտուտի և միջազգայնի կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվել են բազմաթիվ վեբինարներ, հեռուստակոնֆերանսներ տարբեր կարգի և նեղ մասնագետ բուժաշխատողների համար՝ ինպես Covid-19-ի ախտորոշման, բուժման, վարման, կանխարգելման հետ կապված,այնպես էլ նեղ մասնագիտական թեմաներով:Կազմակերպվել է հանդիպում ՀՀ ԱՆ-ի տեղակալի, ԱԱԻ-ի տնօրենի հետ իրազեկելու հավաստագրմանը և հավաստագրման գործընթացի կազմակերպմանը ներկայացվող պահանջների մասին:

Տարվում են աշխատանքներ մինչև 2023 թվականի հունվարի 1-ը բուժաշխատողների կրեդիտավորման համար: Մեկ բուժաշխատող պետպատվերի շրջանակում մասնակցել է վերապատրաստման դասընթացների:

Կաթիլ ՀԿ-ի հետ համատեղ 150 բուժքույրերի կրեդիտավորված դասընթացի կազմակերպում:

Ջերմուկի ԱԿ-ին և Վայքի ԲՄ-ին հատկացվել են մեկական ՇՕ մեքենա:

Վայքի ԲՄ ՓԲԸ-ում Միջազգային Կարմիր Խաչի հովանավորությամբ բացվել է ընդունարանին կից անհետաձգելի օգնության կայան:Նախատեսվում է նմանատիպ բաժանմունքի բացում նաև Ջերմուկի ԱԿ ՓԲԸ-ում:

Մարզի բժշկական կազմակերպություններին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից, որպես մարդասիրական օգնություն, տրամադրվել է «Վեստֆրոստ ՎԼՍ 304Ա» մակնիշի պատվաստանյութերի պահպանման սառնարաններ և «Վեստֆրոստ ՄՖ 314» մակնիշի պատվաստանյութերի պահպանման սառցարաններ: Սառցարանները ընդունելու, պահեստավորելու և բաշխման աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ:

Եղեգնաձորի ԲԿ-ում գործող “Հայկական ակնաբուժության նախագիծ” բարեգործական հիմնադրամի (ՀԱՆ ԲՀ) հիմնած Վահագն Ազլամիշյանի անվ. մարզային ակնաբուժական կենտրոնում 2022թ. 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել են 115 վիրահատություն:

Գյուղական համայնքներում բնակչությանն անհատույց օգտագործման համար բաշխվել է 200 հատ ակնոց:

Կորոնավիրուսի (Covid-19) դեմ պատվաստումների գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար բժշական կազմակերպությունների հետ իրականացվել է առցանց խորհրդակցություն: այցեր բժշկական կազմակերպություններ,Ջերմուկ քաղաքի առողջարաններ:

21.07.2022-ի դրությամբ իրականացվել 35460 պատվաստում, որից 1-ին դեղաչափ՝ 18200, որը 18տ բարձր ազգաբնակչության 49%-ն է, 2-րդ դեղաչափ՝ 16790 – 45.2% և խթանիչ 470 - 1.3%:

Կազմակերպվել է կենտրոնացված և մարդասիրական ճանապարհներով ստացվող դեղորայքի ստացում և կատարվել է բաշխումներ մարզի բուժհիմնարկներին:

Պարբերաբար կատարվել են այցեր հանրակրթական ուսումնական հաստատություններ հակահամաճարակային կանոնների պահպանման ուսումնասիրման նպատակով:

Աշխատել ենք ենթակա և վերադաս կազմակերպությունների, ՀՎԿԱԿ-ի մարզային մասնաճյուղի հետ :

Ուսումնասիրվել են քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, բարձրացված խնդիրներին տրվել են լուծումներ:

Սոցիալական ապահովության բնագավառ

Սոցիալական ապահովության ոլորտի նպատակն է միավորել մարզային, համայնքային, Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, հասարակական կազմակերպությունների ջանքերը՝ մարզի բնակչության սոցիալական խնդիրները հնարավորիս լուծելու համար :

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել 44 օրյա պատերազմում զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների ընտանիքների համար սահմանված հատուցումները ստանալու ուղղությամբ: Տրամադրել ենք անհրաժեշտ խորհրդատվություն, կատարել ենք տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ կարիքավոր ընտանիքներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է բնակարանի կարիքավոր զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հաշվառումը: 2022 թվականի առաջին կիսամյակում հաշվառվել է 4 զոհված զինծառայողների ընտանիքներ:

ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 369-Լ որոշմամբ սահմանված <<Զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման միջոցառումների ծրագրի>> իրականացման նպատակով հրավիրվել է ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> ընդլայնված նիստ, որին մասնակցել են համայնքների սոցիալական աշխատողները, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների տնօրենները, մարզի հասարակական կազմակերպությունների, <<Մանկական զարգացման հիմնադրամի>>, Հայկական Կարմիր Խաչի ընկերության ներկայացուցիչները :

Վարչության ուշադրության կենտրոնում են Արցախի Հանրապետությունից տեղահանված և ՀՀ Վայոց ձորի մարզում հանգրվանած ընտանիքները: Պարբերաբար ուսումնասիրվում է տեղահանված ընտանիքների կարիքները և միջազգային, հասարակական, բարգործական կազմակերպությունների հետ աշխատանքների արդյունքում կարիքավոր ընտանիքներին անհրաժեշտ օգնություն է տրամադրվում: 2022 թվականի առաջին եռամսյակում Վայք խոշորացված համայնքի Արցախից տեղահանված և տեղացի սոցիալապես անապահով 220 ընտանիքներին <<Դիակոնիա>> բարեգործական կազմակերպության կողմից տրամադրվել է սննդամթերքի փաթեթներ:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման համար Արենի համայնքում նախատեսվել է իրականացնել 1 ծրագիր:

Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքների խնդիրները լուծելու համար համագործակցում ենք Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչի գրասենյակի և Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի հետ: Տեղահանված ընտանիքների շրջանում իրազեկման աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարության աջակցության ծրագրերի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն է տրամադրվել:

Հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից տնային պայմաններում ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայություններ են մատուցվում: Ծրագրում ընդգրկված է 80 տարեց և հաշմանդամություն ունեցող անձինք:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից 303 սոցիալապես անապահով քաղաքացիների տրամադրվել է դրամական օգնություն: Մարզի կարիքավոր բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրության համար կատարել ենք տնային այցելություններ: Տարվող աշխատանքների արդյուքում նախորդ ամիսների վիճակագրությունից պարզվում է, որ տրամադրվող սոցիալական աջակցությունը ավելի հասցեական և համաչափ է դառնում և անընդմեջ դիմումներ ներկայացնող քաղաքացիների թիվը էապես կրճատվել է: Միջազգային, հասարակական, բարգործական կազմակերպությունների հետ աշխատանքների արդյունքում Եղեգնաձոր համայնքի 75 բազմազավակ սոցիալապես անապահով ընտանիքների Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանատան կողմից տրամադրվել է սննդամթերքի փաթեթներ:

ՀՀ կառավարության 2004 թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատվել է 1988-1992թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագիրը, որի շրջանակներում շահառու է Եղեգնաձոր համայնքի 1 ընտանիք:

Աշխատանքներ ենք տարվում պասիվ օգնությունների փոխարեն սոցիալապես անապահով ընտանիքներին աշխատանքի տեղավորվելու համար պետական ծրագրեր առաջարկելու ուղղությամբ: Այդ ենթատեքստում կազմակերպվել է Միգրացիոն քաղաքականության միջազգային կենտրոնի կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն ենք միգրանտների ներուժի օգտագործման՝ ի նպաստ Հայաստանի զարգացման»՝ EU4IMPACT ARMENIA ծրագրի ներկայացուցիչների, համայնքապետարանների աշխատակիցների և պոտենցիալ շահառուների հանդիպում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետ Վ.Ասլանյան

26.07.2022թ.